8 կատա[ր]ած] աշխարհի՝ զվարդավառն, բարէկենդան կիւրակէ աւրն։ Զունի
ոք հրաման խափանել. ով յանդգնի՝
9 զվ[երո]գրել նզովն առնու։ Կատարողք գրոյդ աւրհնին յԱ։

Մանրություն.— 1. Ափայը Վասակի կնոջ անունն է։ Երրորդ և չորրորդ տողերում Ափայի հոգու համար տրված նվերներից երկուսը լավ են հասկացվում, դրանք Բերդիկ գյուղում գտնվող Տիկնաքարի և փոքր այգիներն են, բայց դրանցից հետո հիշատակված զԳորոռոնոնք շինական յազատ ի զԱբեսալմանց ճաւղն, միտքը լավ չի հասկացվում։ Գորոռոնոնք հավանաբար տոհմանուն է և վերաբերում է շինականին, իսկ յազատ ի զԱբեսալմաց ճաւղն, պետք է հասկանալ, որ Աբեսալմանց հողը տիրունի տուրքերից ազատ հող է եղել, և Վասակն այդ հողը ևս նվիրել է վանքին։

2. 8-րդ տողի վերջին յանդգնի և 9-րդ տողի սկզբին զվերոգրե(ա)լ բառերի միջև խափանել-ը զեղջվել է, այդ բառը նախորդ նախադասության մեջ գործածված լինելու պատճառով։

3. 5-րդ տողը խիստ կարճ է. արձանագրությունն այդ տողում մինչև վերջ չի շարունակվել այն պատճառով, որ այդտեղ գրերն ընկել են երկու շարք քարերի միացման գծի վրա։

Տարբերություններ.— 1. Ջալ. որից Վիմ 3-րդ տողի Ափային անձնանունը կարդացել են իբրև հասարակ բառ փային, հավանաբար բաժին իմաստով։

2. Ջալ 3-րդ տողի զԳարոռոնոնք կարդացել է զԳարռանանք:

3. Ջալ 4-րդ տողում շինական կարդացել է շինականացս:

4. Ջալ 4-րդ տողում յազատ ի զԱբեսալմնաց ճաւղն կարդացել է պստի զաբէսալմանց ճողն:

5. Ջալ 7-րդ տողում Ափային բառը բաց է թողել։

6. Ջալ 9-րդ տողում նզովն առնու կարդացել է դատի ի տեառնէ:

46. Նախորդի աջ կողմին

(Լուս. № 41)

ԺԳ դարի տասնական թվականներ

Հրատարակված է՝ Ջալ 21—22, Վիմ 248

1 Կամաւն Ա, ես՝ Վասակ եւ ամուսին իմ խաթուն
2 տուաք յԱծածինս մեր որդոյն՝ Քրդաշահի-
3 {ի}ն հոգոյն՝ զՄուսէս մարգարէին որդին իւր
4 [շ]ահ ու զենով եւ Ժ աւրավար հող լաւ աղբոյնք ա-
5 զատ յամէն հարկէ, Մուսէսն իւր տամբն, որ կոռին զ-
6 հողն բանեցնէ ու արգաւնին հաշուին աղ բէրէ։
7 Ես՝ Գրիգոր վարդապետ, ամէն միաբանաւքս էտուա-
8 ք զուրբաթն աւրն զամէն էկեղեցիքս նայա այլ
9 գրին յետ և Քուրդաշահին հոգոյն։ Ով խափանէ ն-
10 զոված է յԱ և ի սրբոց նորա։ Ով հաստատ պահէ աւրնի յԱ։

Մանրություն.— 1. Ժամանակը որոշել ենք Գրիգոր վարդապետի առաջնորդության թվականներով, որի անունով եղած թվակիր արձանագրությունները պատկանում են 1214 (№ 45), 1215 (№ 44), 1217 (33 և 49) թվերին։

Այս Գրիգորը, որ Աբասի որդին է, առաջնորդ է եղել Սանահնի վանքում